

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03**  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

05.03.2004թ.

ժ. 13.00

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան (*խորհրդի անդամներ*), Գ. Սարոյան (*խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝**

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Ն. Մուշեղյան (*Ամփոփ վիճակագրության, հրատարակումների և մարկետինգի բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Գ. Մարտիրոսյան (*Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ*),

**Օրակարգի նախագծում՝ երկու հարց.**

1. 2003 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

2. «Արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների արտադրանքի գների հաշվառման մասին» Ձև թիվ 1-ԻԳ (տարեկան) պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/*

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. 2003 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

*Նշվեց, որ համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 10 և 11 հորդվածների, ՀՀ ՎՊԽ հաստատմանն է ներկայացվել «2003 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվության» նախագիծը: Հաշվետվության մեջ հիմնականում ընդգրկվել են 2003 թվականին կատարված միջոցառումներն ըստ խորհրդի կողմից հաստատված Ծրագրի:*

**Որոշեցին՝**

Հաստատել 2003 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը:

*/Անհատական/*

*/Բվեարկության արդյունքները – կողմ՝7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. «Արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների արտադրանքի գների հաշվառման մասին» Ձև թիվ 1-ԻԳ (տարեկան) պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/*

*Առաջարկվեց դիտարկման հարցաթերթի անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների կողմից թողարկված արտադրանքի գների հաշվառման մասին» Ձեկ թիվ 1-ԳԻՆ»:*

**Որոշեցին՝**

հաստատել «Արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների կողմից թողարկված արտադրանքի գների հաշվառման մասին» Ձև թիվ 1-ԳԻՆ (տարեկան) պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և լրացման հրահանգը.

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Գ. Սարոյան